

Որ պահեստ մեզ, մեր Աշխարհ,
 Որ չըկոխուենք համարձակ
 Սատանայի մահաբեր
 Ծուռ ու ճնկլատ ոտի տակ,
 Որ չըկորչենք հանապազ
 Թէ լիովին, թէ մաս մաս
 Սատանայի կամարար
 Պաշտօնէից ձեռքի տակ:

Սահակ վարդ. Ամասուհի.

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՔԱՐՈՋԻՉԸ

(Թարգմ. Գր. Պետրովից).

Քրիստոսի մեծ կարապետ Յովհաննէսը երկար տարիներ առանձնութեան մէջ պահքով ու աղօթքով պատրաստուում էր իւր քարոզութեան համար: Յորդանանի կողմի անապատում, միայնութեան մէջ նրա մտքից շատ խոր խորհուրդներ էին անցնում, շատ բանէր զգում իւր սրտում, շատ բան էր սովորում անապատի լռութեան մէջ, իւր հոգու խորքերում Աստուծոյ ձայնին տկանջ դնելով: Ամայի անապատը իւր աւագով և մերկ ու մույլ քարերով մարդկանց հոգիներն էր յիշեցնում նրան: Մարդկանց սրտերը դատարկ ու ամայի են, կարծես ամեն ինչ քարացած է նրանց մէջ: Սպասում են Փրկչին, աղօթում են երկնաւոր հօրը, որ երկնքի արքայութիւնը գայ երկրի վրայ, սակայն խոտացեալ Մեօխան գալով կը գտնէ արդեօք ճանապարհ դէպի մարդկանց սրտերը: Բոլոր ճա-

նապարհները ծռւած են: Տիրոջ շաւիղները մոռացուած և ո՛վ պէտք է առաջնորդի դէպի Աստուած արդարութեան ճանապարհից շեղուած այս ժողովուրդին, ո՛վ պէտք է աւետէ մարդկանց, որ փրկութեան ժամը մօտ է: Յովհաննէսի սիրտը ցաւում էր մոլորուած մարդկանց համար. քանի գնում աւելի և աւելի վառւում արդար ցասմամբ դէպի մարդկային անօրէնութիւնները և անապատի տապի պէս կիկոզ խօսքը պատրաստ էր զօրեղ թափով հնչուելու: Յովհաննէսը հասունացել էր Աստուծոյ գոյծի համար և «Աստուծոյ խօսքը եղաւ նրա վրայ այնտեղ անապատում» և եկաւ Յորդանանի կողմերը քարոզելու ապաշխարութեան մկրտութիւն մեղաց թողութեան համար» (Ղուկ. Գ. 2—3):

«Տէրը գալիս է, ասում էր նա, մօտենում է Աստուծոյ արքայութիւնը, շուտով ամեն մի մարմին կտեմնէ Աստուծոյ փրկութիւնը: Տէրը կը գայ և իւր մօտ կը հաւաքէ այն բռնորին, որոնք կը լսեն նրա ձայնին: Նա կը գայ որպէս դատաւոր, և հեծանոցը ձեռքին կը սրբէ իւր կալը, ցորենը կը հաւաքէ իւր շտեմարանները, իսկ յարգը կայրէ անշէջ հրով: Դուք նրան դեռ չէք ճանաչում, բայց Նա արդէն ձեր մէջ է: Պատրաստուեցէք նրան ընդունելու, նրա համար ճանապարհ հարթեցէք: Լցրէք արդարութեամբ ձեր դատարկ հոգիները, խոնարհեցէք Աստուծոյ առաջ, խոնարհեցրէք ձեր հպարտ սրտերը: Տէրը խօստացել է ձեզ փրկութիւն, որ արդէն եկել է և մնում է որ դուք ընդունէք նրան: սակայն ձեր ամեն անարդարութեամբ ու չարութեամբ լի սրտերում տեղ չկայ Աստուծոյ բարի սերմերի համար: Մաքրեցէք ձեր հոգիները, ապաշխարեցէք և կը տեսնէք Աստուծոյ փրկութիւնը»:

«Ապաշխարել» նշանակում է իւր նկատմամբ խիստ դատաստան անել, դատազարտել իրեն և խոստովանել իւր վատ ընթացքը: Սովորաբար մենք մեզնից գոհ ենք լինում: Ինչքան էլ որ վատ կեանք ունենանք, մենք այդչենք դիտակցում, այդ մեզ չի տանջում: Մենք յաճախ

վրդովում ենք կեանքի այլ և այլ կարգերի պատճառով, նեղանում ենք մարդկանց վրայ, սակայն ինքներս մեզ ոչ մի բանում չենք մեղադրում, բոլորովին մի կողմն ենք թողնում մեզ: Այդ իրաւացի չէ: Մեզ իրաւունք չի տրուած ուրիշների վրայ դատաւոր լինելու: Մի դատէք, որ չդատուիք: Մեր ամենքի դատաւորը Տէրն է: Մեր պարտքն է ամենից առաջ մեզ ճանաչել, մտածել ոչ թէ այն մասին, թէ ինչ են անում կամ ինչպէս են ապրում ուրիշները, այլ թէ մենք ինքներս ինչ պիտի անենք, ինչպէս պէտք է ապրենք:

Մեր կեանքի մէջ կան շատ անկանոնութիւններ ու պակասութիւններ, գիտենք ինքներս մեզ, ստուգենք մեր գործերը թէ արդեօք այն ենք անում, ինչ որ պէտք է, այնպէս ենք աշխատում, ինչպէս պատուիրել է մեզ Տէրը: Ի՞նչի վրայ ենք գործ դրել Աստուծոց մեզ տրուած ոյժը: Ի՞նչպիսի հոգով ենք ընթացել կեանքի մէջ: Եւ մեր կեանքը վատ է նախ հէնց այն պատճառով, որ մենք ինքներս վատ ենք: Երկրի վրայ հնարաւոր է և նոյն իսկ պարտաւորական է բոլորովին այլ կեանք, քան այն, որ մենք վարում ենք. սակայն դրա համար անհրաժեշտ է, որ մենք բարեփոխուենք, զգանք, որ այժմ մենք վատ, չար և անմարդավայել կեանք ենք վարում. անհրաժեշտ է, վերջապէս, որ մեզ համար ատելի դառնայ մեր սովորական զազրելի կեանքը: Անհրաժեշտ է, որ մենք փոխենք մեր մտածմունքները, զգացմունքները, գործերը, որ մենք ամեն բանի վրայ նայենք և գործենք Քրիստոսի ուսման համեմատ: Անհրաժեշտ է մարդկանց միջից արմատախիլ անել գազանային կոպտութեան, բռնութեան և եսասիրութեան հոգին: Աստուածային նոր կեանք հնարաւոր է երկրի վրայ, բայց դրա համար հարկաւոր է, որ մենք ինքներս նորոգուինք, Աստուծոյ որդիք դառնանք: Պէտք է ապաշխարել, «Ապաշխարեցէք, ասում էր Փրկիչ, որովհետեւ մօտեցել է երկնքի արքայութիւնը» (Մատթ. Գ. 17):